ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » փետրվարի 2020 թվականի N: 88-Ա ք.Գյումրի

ԱՆԻ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N:2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ, 7-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Ավստրիական զարգացման գործակալության «Եվրոպական միության կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագրի ղեկավարի և Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակի փոխտնօրենի համատեղ հրավերը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնականի 2020 թվականի փետրվարի 28-ի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Անի Մաղաքյանին 2020 թվականի մարտի 4-ին գործուղել քաղաք Երևան՝ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում կայանալիք «Եվրոպական միության կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագրի պաշտոնական մեկնարկին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2020 թվականի մարտի 4-ին:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝